ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ ԵՐԿԵՐԻ

(Քահանայական ձեռնադրութեան եւ օծման 40-ամեակի
եւ եպիսկոպոսական ձեռնադրութեան 30-ամեակի առիթով)

1988 թուականին Ս. Էջմիածնում տպագրուեց Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի «Կոմիտաս Վարդապետ», ապա մէկ տարի անց 1989 թ. Տորոնտոյում՝ «Փունջ մը քարոզներ» գրքերը, որով սկիզբը դրուեց գրական երկար ստեղծագործական ուղիի: Յետագայ տարիներին ստեղծուեցին «Փունջ մը քարոզների» 15 հատորները, հեղինակը գրեց տասնեակ այլ երկեր եւս՝ մինչեւ մեր օրերում տպագրուած «Երկունքի մէջ ծնած խոհեր»-ը, որ համավարակի տագնապի շաբաթներին ստեղծուած խորհրդածութիւններ են եւ պարունակում են իրավիճակից հոգեւոր ապաքինումով դուրս գալու պատգամներ: Ստեղծագործական այդ միջակայքի գրական վաստակը, քահանայական ձեռնադրութեան ու օծման 40 եւ եպիսկոպոսական ձեռնադրութեան 30-ամեակը պատեհ առիթ են՝ մի հայեացք ձգելու եւ ամփոփելու համար ԱՄՆ Արեւմտեան թեմի առաջնորդ, Արքեպիսկոպոս Յովնան Տէրտէրեանի գրական գործունէութեան անցած ուղին:

* * *

Յովնան Արքեպիսկոպոսի ստեղծագործութեան հիմնականում ժանրերն են՝ քարոզներ, խոհագրութիւն, յուշագրութիւն, աղօթագրքեր, այդ թւում՝ մանկական երկեր, մանրապատումներ: Այդ շարքում առաջնային տեղ են գրաւում քարոզները:

Հսկայական է քարոզախօսական մեր ժառանգութիւնը՝ սկսած «Յաճախապատում ճառերից», Ս. Մաշտոցի քարոզչական առաքելութիւնից, Գրիգոր Տաթեւացու Ամարան ու Զմերան հատորներից ու «Վասն մեղաց լեզուի», «Վասն երկրագործաց» քարոզներից: Ստեփանոս Սիւնեցի հեղինակը Գրիգոր Տաթեւացու մասին մի ուրոյն միտք ունի. «Բարի գործերից սառոյցի պէս կարծրացած մարդը անկարող էր դիմանալ նրա խօսքերի

աստուածային սիրուն»։ Եւ Յովնան Սրբազանի քարոզախօսութիւնն ու երկերը առհասարակ հարկ է դիտարկել որպէս շարունակութիւն ու կրողը մատենագրական այս ժառանգութեան։

Վահրամ սարկաւագը ձեռնադրւում է աբեղայ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Աւագ խորանին 1980 թ. յունիսի 8-ին, ձեռամբ Վազգէն Ա կաթողիկոսի, եւ քիչ օրեր անց Մայր Տաճարում մատուցում է ս. պատարագ եւ ունենում իր անդրանիկ քարոզը։ Այդ քարոզի մէջ նորաօծ Յովնան աբեղան հաւատացեալ հայորդիներին փոխանցելով իր նոր կեանքի պատգամը՝ ասում է. «Իբրեւ հայ հոգեւորական իմ նշանաբանն է հաւատք, յոյս, սէր։ ...Իմ նոր կեանքին հիմնաքարերը իբրեւ նշանաբան կը փոխանցեմ նաեւ Ձեզ, սիրելի հաւատացեալներ, որպէսզի այս բառերը կեանքին վերածելով՝ դառնաք ամուր ընտանիքներ, դառնաք միասնական ուժերով հիւսուած մի ազգ»։ *Յետագայ տարիների հոգեւորականի ընթացքը եկաւ ապացուցելու, որ Յովնան Սրբազանը մշտապէս կանգնած մնաց իր ուխտին, այդ թւում՝ գրական ասպարէզում։*

Բազմաժանր երկերի մէջ առանձնանում են բովանդակային մի քանի հիմնական շերտեր, որ անբաժան են առաջին քարոզից ի վեր, եւ կարելի է ներկայացնել մի քանի կէտերի մէջ։

Ա. Յովնան Սրբազանը բազմիցս է անդրադարձել հայ կեանքին ու հայրենիքին՝ *Վարդանանց ու Սարդարապատի խորհուրդներից մինչեւ մեր օրերի Արցախեան հերոսները։ «Արցախի նահատակ հերոսները ճշմարիտ հետեւորդներն են Քրիստոսի։ Եթէ Քրիստոս Աստուածորդին կամաւորաբար յանձն առաւ խաչը բարձրանալ, ապա մեր երիտասարդ ու քաջարի զինուորները սիրով ու հայրենանուէր ոգիով իրենց կեանքը պատարագեցին վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց», գրում է նա։ Անբաժան է հաւատքը հայ կեանքից. «Հաւատքով միայն կարելի է թափանցել հայոց պատմութեան խորքը, հայուն կնիքը խաչով իմաստաւորուած կեանք մըն է»։*

Բ. Հիմնական նպատակակէտերից մէկը երկերում ընտանիքն *է, որպէս ազգի եւ եկեղեցու հիմնասիւն։ «Սուրբ պիտի պահենք մեր ընտանիքը եւ մեր զաւակները դաստիարակենք մեր պապերու հաւատքով, հայրենեաց շունչով եւ Ս. Էջմիածնի լոյսով»։ Ընտանեշունչ երկերի բուն նպատակն է՝ պահել ընտանիքը եկեղեցու հարկի ներքոյ, հաւատքի պատգամներով զինուած։ «Կիրակնօրեայ աղօթքը աւելի ներշնչում կու տայ, երբ ամբողջ ընտանիքը կու գայ հաղորդուելու Աստուծոյ խօսքով», գրում է հեղինակը։*

Գ. Ս. էջմիածնի *հանդէպ ակնածանքի ու խոնարհումի զգացողութիւնն ու մտքերը մշտապէս ուղեկցում են հեղինակին։ Մայր Տաճարի վերանորոգումի այս օրերին, որի նուիրահաւաքի յանձնախմբի ատենապետն է Յովնան Սրբազանը, այդ սէրը առաւել խտացուած է դրսեւորւում երկերում։ Տպաւորիչ է Ս. էջմիածնի թեմաներում սրբազանը, երբ գրում է՝ «Սուրբ էջմիածին — պարզ անուն մը չէ սա։ Այս անունը կը բացատրէ Աստուծոյ էջքը Մայր հողի վրայ, Աստուծոյ ներգործութիւնը մեր ազգի կեանքին մէջ։ Մենք պիտի գուրգուրանք Աստուծոյ կողմէ մեզ տրուած մեծ պարգեւին՝ Ս. էջմիածնին համար, որը մեր առջեւ կը բանայ ճանապարհը յաւերժութեան»։ Կամ՝ «Սփիւռքը երաշխաւորուած է Ս. էջմիածնով ու Մայր Հայրենիքով»։*

Դ. Յովնան Սրբազանի երկերի ու նաեւ գործունէութեան առանցքներից են համամարդկային խնդիրները, *եւ բնական է դա, քանզի ճշմարիտ հոգեւորականի ու մտաւորականի համար անշրջանցելի են այդ խնդիրները, որոնց շարանը մեր օրերում միայն ահագնանում է։ «Աշխարհի բոլոր ցաւերու վրայ հարկաւոր է լոյս դնել, որպէսզի մարդիկ առաջնորդուին դէպի փրկութիւն», ասում է հեղինակը։ «Աւետարանական պատգամները դեղ են ու բալասան, որ պիտի տարածել՝ բուժելու համար մարդկային արատները»։ Դրանց յաղթահարման ուղին անցնում է նախ ներհայեցողութեան միջով, որի մասին նշում է՝ «Երջանիկ է այն մարդը, որ ունի կարողութիւնը քննելու ու դատելու իր անձը»։ Իսկ այդ ինքնաքննութիւնն անցնում է Քրիստոսին հետեւելով՝ «Նման կացութիւնը ամէն ոք կրնայ փոխել՝ հետեւելով Քրիստոսին»։*

Ե. Ամենից հիմնական թեման, *որ հանդիպում է գրեթէ բոլոր երկերում, որ եթէ նոյնիսկ բառացի չէ, ապա տողատակում է հասկացւում՝* նորոգուելու, *հաւատքով, աղօթքով, պահեցողութեամբ քրիստոնէական կեանքն ապրելու պատգամն է։ Հիմնական արդիւնքը, որ մարդ ստանում է աղօթքից ու հաւատքից՝ նորոգութիւնն է ներաշխարհի։ Այդպէս մարդ փոխւում է դէպի բարին։ «Նոր Արարած։ Ահա թէ ուր կառաջնորդէ խաչի ճանապարհը։ Կեանքի օրէնք է սա՝ մշտապէս նորոգուիլ լոյսովը Քրիստոսի»։*

Եթէ խտացնելու լինենք Սրբազանի երկերի հիմնական թեմաները մէկ տողով՝ այն մեր պատկերացմամբ առ Աստուած ուղղուելու եւ լուսաւորուելու մղում է՝ մտքում, սրտում, հոգում ունենալով Յիսուս Քրիստոս եւ Աւետարանի լոյսը։

Յովնան Սրբազանի ստեղծած գրականութեան մէջ ուրոյն տեղն ունի մանկական բաժինը։ Չկայ մի տարի, որ չհրատարակուեն Սրբազանի

մանկական գրուածքների հայերէն ու անգլերէն հատորեակներն ու մանկական աղօթագրքերը։ «Պատանին պարարտ հող է, պիտի կարենանք անոնց տալ կրօնի, հաւատքի, լեզուի սերմեր, որ յաջողինք, որ չլինի թէ ծառը հասունանայ եւ ուշացած ըլլանք», հոգեւոր ուսուցմանը նուիրուած հաւաք-քննարկումներից մէկի ժամանակ այդպիսի միտք արտայայտեց Յովնան Սրբազանը (9.09.19)։ Կարեւոր երկեր են նաեւ խոհագրութիւնները, յուշագրութիւնները, ուր բացայայտւում են մեր անուանի բազմաթիւ հոգեւորականներ ու կաթողիկոսներ՝ սկսած Վազգէն Ա. Վեհափառից, որի հանդէպ առանձնակի սիրոյ ու ակնածանքի զգացում ունի Յովնան Արքեպիսկոպոսը։

Հետաքրքիր է հետեւել Յովնան Սրբազանի ստեղծագործելու եղանակին։ Մտքերը նրա մօտ ծնւում են առկայծումներով, ապա բառային ձեւակերպում են ստանում, գրի առնւում, վերածւում խոհերի շարայարութեան։ Յովնան Սրբազանի հետ առնչուածները անշուշտ կը վկայեն նրա մեղուաջան աշխատանքային առօրեայի մասին, որ արտայայտութիւն է ստացել նաեւ գրական կեանքում։ Հանդիպումների ժամանակ յաճախ կարելի է տեսնել, թէ ինչպէս Սրբազանը գլուխը հակած թղթի վայ գրառումներ է կատարում։ Շրջապատող աշխարհը անընդհատելի կերպով արթնացնում է խոհեր, մտածումներ, որոնք թղթի վրայ են անցկացւում, մշակւում եւ դառնում աղօթքներ, քարոզներ, խոհեր, մանրապատումներ։ Մթնոլորտում թեւածող մտքերի բանաձեւումներ են դրանք, որ տեղ-տեղ ստանում են բանաստեղծական երանգաւորում։ Յովնան Սրբազանի գրիչը օժտուած է բանաստեղծականութեամբ, որ ընթերցողին է փոխանցում հեղինակի սրտի անկեղծ զգացողութիւնները բանաստեղծական լեզուամիջոցներով, արտայայտչականութեամբ։

Մի բնորոշ օրինակ ներկայացնենք։ Քննարկումներից մէկի ժամանակ, յընթացս օրակարգային հարցերի քննարկումների, Սրբազանը թղթի վրայ գրի առաւ հետեւեալ բանաձեւումները առանձին տողերով.

«Եկեղեցին մեր առաքելութիւնն է,
Եկեղեցին աղօթքի տունն է, կեանքին տունն է,
Ազգի տունն է, մայրը բոլորին,
Հայաստանեայց եկեղեցին փոքրիկ Հայաստան է՝
մանրակերտը Ս. Էջմիածնի...»։

Յորդացող այս մտքերը նախապատրաստում են նոր ստեղծագործութիւններ։

Ստեղծագործելու եղանակը ագուցուած է հեղինակի լեզուի, մեր մայրենիի հարուստ հնարաւորութիւններից օգտուելու հմտութեան հետ։ Յովնան սրբազանի երկերում տեսնում ենք բանադարձումների շատ օրինակներ ու պատկերաւորման միջոցներ։ «Ս. Ծնունդը կը նորոգէ ողջ մարդկութեանը Քրիստոսի սիրոյ եւ խաղաղութեան սրբագործող պատուիրանները տարածելով մարդկային կեանքին վիրաւոր թեւերուն *վրայ՝ որպէս* դեղ փրկութեան*»։ Սա բանաստեղծականութեան տանող ճանապարհ է։ Կամ՝ «Բացէք ձեր հոգու աչքերը», «հաւատքի շողեր նետենք», «խաչի տեսիլքը թաքնուած է մեր սրտերուն խորքը», «էջմիածինը արձագանգն է մեր պատմութեան»։ «Անսահման սիրով կուզենք բանալ մեր սրտի ներքին ծալքերը (անմիջապէս մտերմիկ կապ է ստեղծւում ընթերցողի հետ — Ն. Պ.) ուրախ առիթով ողջունելու մեր ժողովրդի զաւակները...»։*

«Ես գրող չեմ, իմ սիրած զբաղմունքն է պարզապէս։ Եթէ այն օգուտ տայ՝ գոհ պիտի ըլլամ», այսպէս է ամփոփւում Յովնան Արքեպիսկոպոսի գրական ուղին իր իսկ խօսքերով, որ մի առիթով ասաց իր գրական կեանքի մասին խօսելիս։

Յովնան սրբազանի ստեղծագործական ուղիի 30 եւ աւելի տարիները ամփոփելիս պէտք է ցանկութիւն յայտնել, որ յետագայի գրական նոր ծրագրերը ներառեն քարոզիչական կամ հովուական ծանրակշիռ աշխատութիւն, Յովնան Արքեպիսկոպոսի հովուական, առաջնորդական, ծխական ու ծիսական հարուստ փորձառութիւնը երիտասարդ հոգեւորականներին փոխանցող օգտաշատ պատգամներով։

* * *

Յովնան Արքեպիսկոպոսի ստեղծագործութիւնների առաւել մանրամասն անդրադարձը թողնելով յետագային՝ ոչ ընդարձակ այս ակնարկից յետոյ ներկայացնում ենք միայն իր հեղինակած ու տպագրուած երկերի ամբողջական մատենագիտական ցանկը ժամանակագրական կարգով, որ կազմել են Հ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանը եւ Մաշտոց Զոբանեանը մեր մասնակցութեամբ։ Ցանկի մէջ ներառուած չեն տպագրման ընթացքի մէջ եղած գրքերը, որոնք լոյս կը տեսնեն 2020 թուականի երկրորդ կէսին։

ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՑՈՒՑԱԿ
Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի տպագրուած աշխատասիրութիւնների

1.	Կոմիտաս Վարդապետ	*Ս. Էջմիածին, 1988*
2.	Փունջ մը քարոզներ	*Թորոնթօ, 1989*
3.	Հովուական Աստուածաբանութեան գործնական ձեռնարկ	*Մոնրէալ, 1989*
4.	Մեծ պահի Կիրակիներ	*Թորոնթօ, 1989*
5.	Աստուածաշունչ քարոզներ	*Թորոնթօ, 1989*
6.	Տէրունական Աղօթքը, Բացատրութիւն	*Թորոնթօ, 1989*
7.	Աւետարանաշունչ քարոզներ	*Թորոնթօ, 1989*
8.	Ապրուած խոհեր, Բ. Հտ.	*Մոնրէալ, 1991*
9.	Աւետարանական խոհեր	*Մոնրէալ, 1991*
10.	Մեծ Պահքը հանգրուաններով	*Մոնրէալ, 1991*
11.	*The Lent Period*	Montreal, *1991*
12.	Խօսող հոգիներ	*Մոնրէալ, 1992*
13.	Հոգելից հանդիպումներ	*Մոնրէալ, 1993*
14.	Հոգենորոգ յուշեր	*Մոնրէալ, 1993*
15.	Հոգեշունչ մանրապատումներ, Ա. Հտ.	*Մոնրէալ, 1994*
16.	Նորակնունք	*Մոնրէալ, 1994*
17.	Փունջ մը քարոզներ, Ա. Հտ.	*Մոնրէալ, 1994*
18.	Հոգիիս մկրտութիւնը	*Մոնրէալ, 1994*
19.	Քարոզներ	*Մոնրէալ, 1995*
20.	Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Ա. Հտ.	*Մոնրէալ, 1995*
21.	Մտորումներ հոգելոյս Վազգէն Ա. Վեհափառի շիրիմին առջեւ	*Մոնրէալ, 1995*
22.	Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Բ. Հտ.	*Մոնրէալ, 1997*
23.	Խոհեր	*Մոնրէալ, 1997*
24.	Տաղաւար քարոզներ եւ ելոյթներ	*Մոնրէալ, 1997*
25.	Նոր տարին կը ծնի մարդուն մէջ	*Մոնրէալ, 1997*

26.	Սուրբ Պատարագ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ	*Մոնրէալ, 1997*
27.	Աւագ Շաբթուայ խոհեր	*Մոնրէալ, 1998*
28.	Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Գ. Հտ.	*Մոնրէալ, 1998*
29.	Հոգեւոր ճանապարհորդութիւն	*Մոնրէալ, 1998*
30.	Հայաստանը առաքելութիւն է	*Մոնրէալ, 1998*
31.	Մեծ Պահքի խորհրդածութիւններ, Դ. Հտ.	*Մոնրէալ, 2000*
32.	Փունջ մը քարոզներ, Բ. Հտ.	*Մոնրէալ, 2000*
33.	Հոգեշունչ մաՀրապատումներ, Բ. Հտ.	*Մոնրէալ, 2000*
34.	Հայաստանեայց Եկեղեցին՝ կեանքի ճանապարհ	*Մոնրէալ, 2000*
35.	Փունջ մը քարոզներ, Գ. Հտ.	*Մոնրէալ, 2002*
36.	Հոգեշունչ մաՀրապատումներ, Գ. Հտ.	*Մոնրէալ, 2002*
37.	*Reflection on the 1700th anniversary of Christianity in Armenia*	Montreal, *2002*
38.	*The Christology of St. Nerses*	Montreal, *2002*
39.	Խմորուինք աղօթքով	*Մոնրէալ, 2003*
40.	Փունջ մը քարոզներ, Դ. Հտ.	*Մոնրէալ, 2003*
41.	*The Armenian Church, A Journey of Life*	Montreal, *2003*
42.	Արարողութիւն Հայ Եկեղեցասէր Տիկնանց Օրուայ	*Մոնրէալ, 2003*
43.	Ձէոյս ի քոյոց…	*Մոնրէալ, 2003*
44.	Հոգեշունչ մաՀրապատումներ, Դ. Հտ.	*Պըրպէնք, 2003*
45.	*Spiritual Reflections*	Los Angeles, *2004*
46.	*Return to God*	Los Angeles, *2004*
47.	Ծաղկաքաղ	*Պըրպէնք, 2004*
48.	Փունջ մը քարոզներ, Ե. Հտ.	*Պըրպէնք, 2005*
49.	Հոգեշունչ մաՀրապատումներ, Ե. Հտ.	*Պըրպէնք, 2005*
50.	Քսանհինգամեայ ճանապարհ նոր արշալոյսներու	*Պըրպէնք, 2006*
51.	*The Lenten Journey… Spiritual Reflections* Հոգեւոր ճանապարհորդութիւն	*Պըրպէնք, 2007*
52.	Փունջ մը քարոզներ, Զ. Հտ.	*Պըրպէնք, 2007*

53.	*Faith in Action*	Burbank, *2007*
54.	Աւագ Շաբաթը՝ Դուռն Յարութեան	*Պըրպէնք, 2007*
55.	Հոգեշունչ մանրապատումներ, Զ. Հտ.	*Պըրպէնք, 2008*
56.	Փունջ մը քարոզներ, Է. Հտ.	*Պըրպէնք, 2008*
57.	Փունջ մը քարոզներ, Ը. Հտ.	*Պըրպէնք, 2010*
58.	Ուղեցոյց Հովուական Կեանքի	*Պըրպէնք, 2010*
59.	Քահանայի 40-օրեայ ճանապարհը	*Պըրպէնք, 2010*
60.	Միտէն դէպի սիրտ, Ասոյթներու ընտրանի Փունջ մը քարոզներ, Թ. Հտ.	*Պըրպէնք, 2010*
61.	«Հայր Մեր» Տէրունական Աղօթքի մեկնութիւն մանուկներու համար	*Պըրպէնք, 2010*
62.	Մանրապատումներ եւ խոհեր, Դ. Հտ.	*Պըրպէնք, 2011*
63.	Փունջ մը քարոզներ, Ժ. Հտ.	*Պըրպէնք, 2012*
64.	Նոր Կեանքի Դուռը	*Պըրպէնք, 2012*
65.	Սրտէ Բխած Աղօթքներ	*Պըրպէնք, 2012*
66.	Փունջ մը քարոզներ, ԺԱ. Հտ.	*Պըրպէնք, 2013*
67.	*Nourish and Enrich your Spirituality*	Burbank, *2013*
68.	Բարութեան Սերմեր	*Պըրպէնք, 2013*
69.	Հոգու Կաթիլներ, Աղօթագիրք	*Պըրպէնք, 2013*
70.	Ապրուած Կեանքի Յուշեր, Մանրապատումներու Հաւաքածոյ	*Պըրպէնք, 2013*
71.	*The Lenten Journey*, Ճանապարհորդութիւն Աստուծոյ Հետ	*Պըրպէնք, 2013*
72.	Սրտէ Բխած Աղօթքներ(Ա, Բ, Գ) (Հայ-Անգլ)	*Պըրպէնք, 2014*
73.	Սրտէ Բխած Աղօթքներ «Հաւատով Խոստովանիմ»-ի ներշնչումով	*Պըրպէնք, 2014*
74.	*Faith in Action (2nd Ed)*	Burbank, *2014*
75.	Աղօթարան Հայ Մանուկին (Հայ-Անգլ)	*Պըրպէնք, 2014*
76.	Աւագ Շաբթուան Հոգեւոր Ճանապարհորդութիւն, (Հայ-Անգլ)	*Պըրպէնք, 2015*
77.	Փունջ մը քարոզներ, ԺԲ. Հտ.	*Պըրպէնք, 2015*
78.	*Spiritual Reflections*	Burbank, *2015*

79.	*The Lord's Prayer*, Տէրունական Աղօթք (*Booklet*)	*Պըրպէնք, 2016*
80.	*Christian Identity*, Քրիստոնէական Ինքնութիւն	*Պըրպէնք, 2016*
81.	*Towards a More Fruitful Life*, Դէպի Առաւել Կեանք	*Պըրպէնք, 2016*
82.	Հրաւէր Աղօթքի	*Պըրպէնք, 2017*
83.	Դէպի Նոր Կեանք	*Պըրպէնք, 2017*
84.	*The Life*	Burbank, *2017*
85.	Փունջ մը քարոզներ, ԺԳ. Հտ.	*Պըրպէնք, 2017*
86.	Դէպի Առաւել Կեանք, *Toward a More Fruitful Life*	*Պըրպէնք, 2018*
87.	Աղօթարան Հայ Մանուկին (Բ Տպգ)	*Պըրպէնք, 2018*
88.	Հրաւէր Աղօթքի (Բ Տպգ)	*Պըրպէնք, 2017*
89.	Ապրուած Կեանքի Յուշեր (Բ Տպգ)	*Պըրպէնք, 2018*
90.	Աղօթարան Հայ Մանուկին (Բ Տպգ)	*Պըրպէնք, 2018*
91.	Փունջ մը քարոզներ, ԺԴ. Հտ.	*Պըրպէնք, 2019*
92.	Խոստում՝ Նորովի կեանքը ապրելու	*Պըրպէնք, 2019*
93.	Սրտէ Բխած Աղօթքներ, (Բ Տպգ)	*Պըրպէնք, 2019*
94.	Երբ Առանձին եմ՝ Մենակ չեմ	*Պըրպէնք, 2019*
95.	Հոս չէ, Յարութիւն Առաւ	*Պըրպէնք, 2020*
96.	Յարութիւն եւ Կեանք	*Պըրպէնք, 2020*
97.	Փունջ մը քարոզներ, ԺԵ. Հտ.	*Պըրպէնք, 2020*
98.	*Walking Out of the Upper Room*	Burbank, *2020*
99.	Սմանչելի հոգեւորականը՝ Գարեգին Տրապիզոնցի	*Պըրպէնք, 2020*
100.	Երկունքի մէջ ծնած խոհեր	*Պըրպէնք, 2020*
101.	Քայլ առ Քայլ, 40 Յուշեր 40-ամեակի	*Պըրպէնք, 2020*